ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՎԱՐՈՒԺԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՊԱՐԱՃՅԱՆԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ-ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՎԱՐՈՒԺԱՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՊԱՐԱՃԵԱՆ, ՈՐ Ի ԷՎԸՆՍԹԸՆ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից տեղեկացանք, որ առաջիկայ մայիս 31-ին պիտի նշուի քահանայական Ձեր ձեռնադրութեան յիսնամեայ յոբելեանը: Ուրախ այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը, շնորհաւորանքներն ու բարեմաղթութիւնները:

Սիրելի Հայր Սուրբ,

Կէս դար շարունակ Դուք անխոնջ նուիրումով սպասաւորում էք Մայր Եկեղեցու անդաստանում՝ Ձեր առաքելութիւնը սկսելով Երուսաղէմի Պատրիարքութիւնում՝ որպէս Դպրեվանքի տեսուչ եւ ուսուցիչ, այնուհետեւ շարունակելով Ձեր ծառայութիւնը ԱՄՆ հայոց Արեւելեան Տիրախնամ թեմում:

Ձեր բարեջան առաջնորդի միջոցով Մենք տեղեակ ենք հաւատաւոր ու ծառայասէր Ձեր ընթացքի բարի արգասիքներին եւ յանուն մեր Սուրբ Եկեղեցու եւ ժողովրդի ներդրած Ձեր անյոգնաբեկ ջանքերին: Ձեր հոգում կրելով Երուսաղէմի հայոց Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց վանքի Ժառանգաւորաց Վարժարանի կնիքը, Դուք, որպէս մշտարթուն հովիւ, Ձեր կարողութիւնները անձնուիրաբար ի սպաս էք դրել Տիրոջ խօսքը մեր ժողովրդի զաւակների հոգիներում սերմանելու սրբազան առաքելութեանը: Հոգեւոր Ձեր ծառայութեան պտուղները, որոնք գնահատուել են նաեւ Էվընսթըն քաղաքի քաղաքապետարանի կողմից, Ձեր հօտի բարեպաշտ հաւատացեալների Քրիստոսասէր հոգիներում նորոգում են հաւատն առ Աստուած եւ սերը առ ազգային սրբազան արժէքները:

Սիրելի Հայր Սուրբ, Ձեր կեանքի յիշարժան այս հանգրուանին Հայրապետական Օրհնութեան այսու Գրով Մեր բարձր գնահատանքին ենք արժանացնում հոգեւոր ասպարէզում տասնամեակների Ձեր վաստակը եւ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում Մեր օրհնութիւնը:

Ի խորոց սրտի մաղթում ենք, որ Բարին Աստուած օգնական ու աջակից լինի Ձեզ հոգեւոր կոչման մէջ եւ հանապազ զօրացնի՝ շարունակելու Ձեր ծառայութիւնը մեր ժողովրդի բարեպաշտ զաւակներին՝ ի շինութիւն եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Ամենակարող Տէրն Իր հայրական սիրոյ մէջ պահի ու պահպանի Ձեզ, պարգեւի քաջառողջ արեւշատութիւն, հանապազ օրհնի Ձեր կեանքը գործոց յաջողութիւններով ու երկնատուր պարգեւներով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 12-ն Մայիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 350